

# ՄԱԿ-ն «օպտիմալացնում» է ՀՀ գիտությունը

ԽՍՀՄ փլուզման պահին Հայաստանն ունեցել է 25 հազարից ավելի գիտաշխատող, որոնք աշխատում էին շուրջ 230 գիտահետազոտական կառույցներում: Այսօր անկախ Հայաստանում գիտության ներկա վիճակը գնահատվում է ճգնաժամային եւ այդ խնդիրը լուծելու համար ծանապարհ է առաջարկում ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը:

Այլ կերպ ասած ՄԱԿ-ն առաջարկում է «օպտիմալացնել» Հայաստանի գիտության ոլորտը եւ այն համապատասխանեցնել նորանկախ երկրների իրողություններին: Ըստ ՄԱԿ-ի, խնդիրները բազմաթիվ են: Առաջարկով «ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ներուժի հզորացում քաղաքականության մշակման բնագավառում» ծրագրում դրանցից թվարկվել է շուրջ 10-ը, որոնք վերաբերում են ոլորտի «ծերացմանը», «ուղեղների արտահոսքին», անարդյունավետ կառավարմանը եւ այլն:



«Դադարել է գործել գիտության կառավարման նախկինում խիստ կենտրոնացված համակարգը, շատ գիտական հաստատություններ ինքնահոսի են մատնված, նրանց հետազոտությունների թեմատիկան մշակվում է նախկինից փոխանցված իներցիայով, կամայական հիմնավորումներով: Փաստորեն, գիտության համակարգը բնութագրվում է զարգացման հստակ ռազմավարության բացակայությամբ, սուղ միջոցների զգալի մասի փոշիացմամբ: Պետական բյուջեից տարեկան զգալի գումարներ են հատկացվում գիտությանը, ինչը, սակայն, գործող կառուցվածքների ու կառավարման սխեմաների պայմաններում մրցունակ հետազոտություններ անելու համար չափազանց փոքր գումար է», - ասված է ՄԱԿ-ի զարգացման ծրագրում: Ներկայացված են նաեւ գիտական աստիճան ունեցող հետազոտողների միջին տարիքը պարզելուն ուղղված ուսումնասիրության արդյունքները: Պարզվում է, Հայաստանում տվյալ ցուցանիշը չափազանց բարձր է՝ 60 իսկ վերջին 10-15 տարում նաեւ աճի միտում է գրանցվել: Ըստ ՄԱԿ-ի, գիտության արդյունավետության համար կենսական անհրաժեշտություն է այդ նշագծի նվազեցումը: Աշխարհի երկրներում 1999թ. 44-ն է համարվել արդյունավետ տարիք, 2000 թվին Ռուսաստանում՝ 53 տարին:

տության ոլորտում բազմաթիվ երկրների փորձը: Այդ երկրներն են ԱՄՆ-ն, Ճապոնիան, Գերմանիան, Իտալիան, Մեծ Բրիտանիան, Սինգապուրը, Ֆինլանդիան, Սլովակիան, Չեխիան, Իսրայելը, Ղազախստանը, Ռուսաստանը, Էստոնիան, Հարավային Կորեան: Այսպիսով, ստացվում է, որ 12-ամյա կրթական համակարգի պես գիտությունը նույնպես համապատասխանեցվում է միջազգային չափանիշներին: Այդ չափանիշները էականորեն տարբերվում են գիտական այն համակարգից, որն այսօր գործում է ՀՀ-ում: Այդ էական տարբերությունը կայանում է նրանում, որ «դրսի» համակարգերում չկա, օրինակ՝ Գիտությունների ազգային ակադեմիա, որը պահանջվում է լուծարել, չկան բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ: Վերջիններիս բազմազանությունն առաջարկվում է լուծել «օպտիմալացումով»: «ՀՀ այն գիտահետազոտական կառույցները, որոնք պրոֆիլիով մոտ են միմյանց, մասնատված են ու մեկուսացած, հարկավոր է միավորել-խոշորացնել՝ միջառարկայական թեմատիկայի միասնացման հիման վրա»:

Գիտության ոլորտի բարեփոխման ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի առաջարկը՝ կառուցվածքային առումով, հետեւյալն է. «ՀՀ գիտության բնագավառի իրավիճակի եւ միջազգային փորձի համակողմանի վերլուծության արդյունքում հստակեցվել է ակադեմիական, բուհական եւ գերատեսչական հետազոտական հաստատությունների ենթակայության կարգավիճակը՝ շեշտը դնելով առավելապես ինտեգրված հետազոտական միավորների (կենտրոնների) ստեղծման վրա: Ըստ այդմ, հիմնարար հետազոտություններով զբաղված ակադեմիական ինստիտուտների որոշակի մասը պետք է փոխադրվի համալսարաններ, նրանց կազմում պահպանելով հարաբերականորեն առանձնացված կառույցի կարգավիճակը, մի մասը, ըստ պրոֆիլի միավորվելով, կծեւավորի ազգային գիտական կենտրոնների ցանցը, վերջապես, մնացած մասը՝ կփոխադրվի գերատեսչական ենթակայության»:

Այս ամենը մշակվել էւ առաջարկվել է ՀՀ իշխանություններին ելնելով այն բանից, որ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի պնդմամբ ակնհայտ է. ՀՀ-ն առաջիկայում չի կարող պահպանել ու զարգացնել իր գիտական ներուժը առանց ինտեգրվելու երկրի տնտեսությանը, մյուս կողմից, ՀՀ տնտեսությունը չի կարող դառնալ միջազգային չափանիշներով մրցունակ՝ առանց հենվելու զարգացած գիտության արդյունքների վրա:

Առկա խնդիրը լուծելու համար առաջարկներ ներկայացնելուց առաջ ՄԱԿ-ն ուսումնասիրել է գի-